ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 15 » « հոկտեմբերի » 2024թ.**

ժամը 10:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Լ.Սինանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Կ.Պետրոսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հարությունյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Մ.Գևորգյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ.Սարդարյան

Բացակայում էր՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ռ.Հակոբջանյան

1. Հանձնաժողովի անդամի բացակայության և նիստը նախագահող ընտրելու մասին

1.1. Հանձնաժողովի նախագահ Ռ.Հակոբջանյանը նիստին ներկա չէ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 1-ին ենթակետը նիստը նախագահում է հանձնաժողովի անդամ Լ.Սինանյանը:

2. Տեղեկություն «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գնի մասին

2.1. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով մրցույթի գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով:

Հ/Հ	Ծառայության անվանումը	Հափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը (դրամ)
1.	Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ ծառայություն)	520 000

3. Տեղեկություն «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով մրցույթի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

3.1. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2024 թվականի հոկտեմբերի 15-ին, ժամը 10:00-ին:

4. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե	ՀՎՀՀ	Հեռախոսահամար
«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ	info@silinsurance.am	02551341	060 540 000
«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ	corporate-ins@armeniainsurance.am	02574465	011/012 560 404

5. Տեղեկություններ գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի շահերի բախման վերաբերյալ

5.1. Գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

6. Տեղեկություններ հրավերի պահանջներին համապատասխան հայտերի էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման վերաբերյալ

6.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Լ.Սինանյան)

7.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Լ.Սինանյան)

8.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթում՝ Հավելված N 1-ում՝ Դիմում հայտարարության մեջ բացակայում են կազմակերպությունների իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջերի հղումները, փոխարենը մասնակիցները ներկայացրել են Հավելված 1.1-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրերը և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված մասնակիցների իրական շահառուների վերաբերյալ գրությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/հ	Ծառայության անվանումը	Գնի առաջարկները (դրամ)			
		«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ		«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ	
		Գինը	Գինը	Գինը	Գինն առանց ԱԱՀ
1	Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ ծառայություն)	373 000	373 000	463 000	463 000

9.1. Մասնակիցների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

10.Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

10.1. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

11. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

11.1. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների գնահատման արդյունքում առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին, երկրորդ տեղ՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ին:

12. Հանձնաժողովը որոշեց՝

(Լ.Սինանյան)

12.1. Հիմք ընդունել ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված մասնակիցների իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը:

12.2. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին:

12.3. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-25/02» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին՝ անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել, օրենքով և հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել՝

ա) պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ գնման գնի 10 տոկոսի չափով և

բ) որակավորման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ գնման գնի 15 տոկոսի չափով:

12.4. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

12.5. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 12-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

13.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ),
(ԳՊ/ԳԱ) _____ Լ.Սինանյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Կ.Պետրոսյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Հ.Հարությունյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Մ.Գևորգյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) _____ Լ.Սարդարյան